

5505

550.6

1919  
9 (47.925)  
S - 26





ԼԵՒՈՆ Ս. ՏԱՐԱԳՃԵԱՆ

9(49.925)

Յ-26

(12)


ՄԱՐԳԱՐԵՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՊՍԱԿՈՒՄԾ



0.0

ԱՏԱՆԱ

Տպագրութ «ՀԱՅ ԶԱՅՆ»-ի թիւ 6  
1919





34443-4.2.

# ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԷ

— 0 —

Մտղելիք թուրք ազգին թագաւորութեան, Ռնգհ. Պառերազմին, Հայկական կոտորածներու և աղէաներու վրայ մարգարէութիւններ ալ պակաս չեն:

Բոլոր քրիստոնէական հաւատք ընծարած Սր. Գրքի մէջ անոնկ մարգարէութիւններ կան որ ճիշտ այս երեւցած մեծ զէպքերու վրայ զիրար կը վկայեն ինչպէս Չորս Աւետարանիչները զիրար կը փաստեն. այնպէս է նաև Դանիէլի, Մարկոսի ու Յովհաննէսի՝ թագաւորութեանց համար գրած մարգարէութիւնները. և արդէն իսկ այս հրաշագան աղէաները՝ Ս. Գրքով մը մարգարէութեանը պէտք կար: Այս մարգարէութիւնները Ս. Գրքի մէջ տեղ տեղ ուզատ զատ յօդուածներով՝ միեւնոյն նիւթի վրայ խօսուած, փաստերով, խորհուրդներով և առաջներով զոցուած և

2 0 0 4



17609-59 Կ

ԲՆ ԲՆ 11



կնքուած են, սրպէսոյի շի հասկցուն՝ մինչև ժամանակը հասնի և ժարգարէութիւնները կատարուած ըլլան:

Եթէ մարդիկ այս մա գարէութիւնները հասկցած ըլլային այս օգէտներուն չպիտի ենթարկուէին, շատանց աստձքը առնել կաշխատէին:

Դարեր աստձ շարունակ մարգարէները ծագելիք աս անխիղճ, նենգամիտ ազգին համար ըսած են շատ բաներ: Այս մանկամիտ թուրքը՝ հակառակ իր անտեսօպէս, արհեստօպէս և մտաւրօպէս ակարութեան՝ ծագեր և սպրեր է դարերով:

Բայց ինչն է:


Իր ակարութիւնը խնայող նենգութեամբ, Խաբերայութեամբ, Խորամանկութեամբ և Սրով, նա եղած է Դատող, Զրպարտող Ստախօս, Կեղծող աստնք են եղած իր զէնքերը իր անխնայարտ ձեռքին մէջ Վերամութիւն, Թրքութիւն, Գրգռութիւն:

Ինչպէս որ թաթ մ'ունի առիւծը՝ խոզն ու փիղը իր ժանիքը՝ թուրքի ալ ունեցած է գէշ զէնք մը — Ահարդարութիւնը — թուրքը գիտունէն

մինչև օգէտը հանգող ու խարոզ է. աշխարհի էջ անկարելի է գանել անկեղծ. և բարի թո՛ք մը՝ և եթէ կան բարիներ անոնք միշտ նուազ չարեր են. Չարեն երբ սպրեր խա են, չար են երբ անվասան և սնձնավստան են, չար են երբ խենեղակեայ են, երբ անսիրտ են, բայց սո՛ միայն ճշմարիտ է որ աստնք ունին կամք մը և արուեստ մը — Ոձի՛ր և ՄԱՐԴԱՍՊԱՆՆՈՒԹԻՒՆ —:


Վասն զի Վերքօյս թեան արժանի ըլլալու համար կամ մեռնելու է կամ մեռցնելու է՝ կ'ըսեն անոնք:

Եւ այս կը ծանչնան, իբրև իրենց անկապտելի իրաւունքը. անոնց հաստքն է այս:





## ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆՆԵՐ



Դանիէլ 13—1,9

«Անանկ նեղութեան ժամանակ պիտի  
ըլլայ որ ազգ ըլլալէն մինչև այն ատենը  
անանկը եղած չէ, և այն ժամանակ քու  
ազգ պիտի ազատի, — այսինքն գրքի  
մէջ գրուած բոլոր ազգերը — ու եթէ  
բիս վրայ ընակող ազգերէ շատերը պի-  
տի արթննան ոմանք յաւիտենական  
կենաց համար և ոմանք ալ նախատա-  
նաց և յաւետենական անարգանաց հա-  
մար »

Այս մարգարէութեան ակնարկած  
«Նեղութեան ժամանակը» ճիշտ էնդհա-  
նուր Պատերազմին երևան գալը ու  
անոր բերած ջարդերն ու տառապանք  
ներն է, սրմէ պիտի ծնէր Ազգերու  
Ազատութիւնը. իբրև ալ Համաձայնա-  
կաններու շնորհիւ Դանիէլի ազգին հետ



քաղաքակրթութեան ատակ շատ մը ազգեր ազատագրուեցան «Ապրելու համար» և ուրիշներ որպիսիներէն է թուքը՝ «ա խոնակիւն նախառանայհամար» :

Բայց Ազատագրուած ազգերը երախտագիտութեան արձաններ պէտք է կանգնեն համաձայնականներու ու մարդկութեան դասին զոհարեւոյ պայծառ նահատակներուն համար :

Մենք՝ արդէն Հայերս կ'օրհնենք և կը փառարանենք անոնց յիշատակը, որք յազթուած ինկան՝ և անոնք, որ յազթական կանգնեցան, անոնք դրօշակիրները կղան վեհ սկզբունքներու և զարմանողները ու բժիշկները՝ մեր դարաւոր վերքերուն :

Գանիէլի մարգարէութիւնը՝ երկրի վրայ գտնուող ազգերը երկուքի կը բաժնէ, այսինքն՝ քաղաքակրթութեան ատակ ըլլալով՝ յախտեան ապրելիքները և անատակ ըլլալով՝ կորսուելիքները, որոնց առաջինը թուքն է, որ կը գատապարտուի անարգանքի և մահուան . . . :

Հրեշտակը Գանիէլին ըստու.

«Բու տեսած խոյզ երկու եզջիւր անէր, անոնք Մարոց ու Պարսից թագաւորներն են, որ յազթական արշաւանքով տարածեցաւ չորս զին. բայց վերջը որ տեսար այժերու գօշը Յունաց թագաւորութիւնն էր վերջապէս ատանց թագաւորութեանը վերջը՝ երբոր անբարիշտները իրենց անբարշտութեանը չափը լեցնեն Մէկ պնդերես ու խորագէտ թագաւորութիւն մը պիտի կննէ՝ և անոր իշխանութիւնը պիտի զօրանայ բայց չէ թէ իր զօրութեամբը, և անիկա սքանչելի կերպով պիտի աւրէ ու պիտի յաջողի և բան պիտի տեսնէ, և զօրաւորները ու սուրբ ծաղովուրդը պիտի աւրէ և իր խելքին միջոցովը նենդութիւնը իր ձեռքին մէջ միշտ պիտի յաջողի, ու որտիւ մէջ պիտի հպարտանայ և խաղաղութեան մէջ ապրող շատերը կորսնցնէ և իշխանութեանց իշխաններու դէմ պիտի դնէ, բայց առանց ձեռքի պիտի կտորի ու

Երբ Յունաց թագաւորութիւնը յազ-



Թեց Մարտի առ Պարտից թագաւորնե-  
րու՝ անկէ վերջ յանոց վերջին թագա-  
ւորութիւնն ալ չազթուեցաւ պինդերես  
ու խորագէտ թուրք թագաւորութեան  
կողմէ. սրովհետեւ չճանոց ժողովուրդը  
կ'ամբարշտանար իր կտաւվարութեա,  
դէմ, խռովութիւններ ելած էին. թուր-  
քերը այս առիթէն օգտուելով յարձա-  
կեցան Յունաց վրայ և անոնց թագա-  
ւորութիւնը կործանելով տէր գարձան  
Կ. Պոլսոյ, և այս պնդերես ու խորագէտ  
թուրք թագաւորութիւնը գորացաւ  
այլացել տաղանդներու շնորհիւ և և եր-  
բեմն մեծ, արդի պետութանց օժան-  
գակութեամբ երբ մինչև Վիեննայի  
գոները հասաւ, ճամբուն վրայ սքան-  
չելապէս աւերելով, ջարդելով. կոտու-  
րելով և գրաւելով յանառատնէն մինչև  
կովկաս. հարցուցէ՛ք կովկասէն մինչև  
Միջերկրական և Աւրապայէն մինչև Ա-  
բաբխա: Մի արեց ու կործանեց այս  
տեղերը, որքան անտահման տարածու-  
թիւն և ինչպիսի՞ արդաւանդ հողեր  
քանդումի, հրդեհումի, ոճիրի համար,  
Ամօթ էր ալ Աւրապային, կ'ըսէր  
ԴՐՕՇԱԿ, թրքական ճանկերումն էին

թողել քղկրթութն. հրաշագի երկիր-  
ներ, թիգանդական կալտա: րայի օրրանը  
Փոքր Ասիան Հայաստանով, ուր թիւ-  
շխական բանաստեղծութիւնը գեանգած  
էր աննման եզերք, Քրիստոսնէական  
Վարդապետութեան մեծ հիմնադրի  
բազմատանջ հայրենիքը, գեղեցիկ Քալ-  
կանը, կենտունակ ազգելի բազմութիւ  
յաջորդներով վերջապէս Մանսիդի կրօնի  
ստասպելական օժանները, սրպէսքի  
Նըլաբը քէօշիր, սնչացնի այն բոլորը՝  
ինչ տեղծեր է պատմական հանձարը,  
և դորձնի այդ բոլոր երկիրները մի  
ապանդանոց: Աբխազ, սկաւա հոսիլ գեաթ  
նման, աւերմունք, կատարած, կազա-  
պաւա, գաղթ, տարս գրութիւն, Հայ-  
կական կատարածներու համախորհային  
պրերգութեան այդ գերբնական տեսա-  
րանք»:

Այս նենգամիտ ազգը նենգութիւնը  
իր ձեռքին մէջ միշտ ցաջողցուց Արս-  
պան խարելու համար, ստաստութեան  
և խարեքացութեան պատկասրը եղած  
էր, երբ իր յաջողութեանց համար հր-  
պարտացաւ և խաղաղութեան մէջ ապ-  
րոզ Հայ Ազգն ու շատերը ջապեց ու



տառապեցուց, դարձեալ հարտացած եղաւ երբ Համաձայնութեան գէմ պատերազմ հրատարակեց և սուսնց այլև այլի յաղթուեցաւ, այսինքն արդարութեան ձեւքով:

Չի ձգեց ազգ մը, զոր թոնակիս ըրած չըլար, իրար ձգեց ազգերը — Բալկանները — և որ ազգին հետ որ յարաբերեցաւ ինքզինք կլեցուց միշտ իրբև մտերիմ և հաւատարիմ, նաերբ քաղաքական սոճիքներ գործեց միշտ խորագէտ եղաւ ինքզինք Եւրոպիոյ գէմ անմեղ զստնուկ մը ցոյց տալ: Կենիչներուն և օտարական հիւրերուն այնպիսի հիւրամեծարութիւն և անհուկանութիւն ցոյց կուտայ՝ այնպիսի անձնուիրութիւն և անուշ լիզու որ զանոնք երախտապարտ կը ձգէ, որով մորդ կը ստիպուի խորհիլ թէ՛ արդեօք այս կատարածները քրիստոնեաները թուրքերուն ըրած են, կամ սո՛ւա են քրիստոնեաները թէ՛ զրպարտողներ են:

Միամիտ եւրոպացիներ.

Անոնք այդ տեսակ դատերը շատ լաւ ուսած են և կրնան ուսուցանել ձեզի ալ, օ՛, անոնք, գահիճները՝ գլխ

նայով կը դործեն ամէն բան, սպաննութիւն, լլկում, գողութիւն, և միշտ կը տմբատանեն իրենց չարիքին գոճերը ձեր առջև և կը սքողեն իրենց յանցանքը, սուրին տեսակէ գաւ մըն է այս գոր չարիքը գործելէ վերջ՝ նախապարտատուած ըլլալով կը խաղան, այդ չարիքի ազգեցութիւնը ջնջելու համար Եւրոպայի գէմ:

Հասկնալիցիները հին տոննակը՝ բացէ ի բաց մրցարաններու և կրկնենու մէջ կ'ընէին իրենց գազանային շահատակութիւնները — ցլամուրտ, գազանամարտ, գերլնիրու չարչարում և աներեւակայելի հրէջութիւններ — մտովուրդի առջև և կը յայտարարէին ի բեր աշխարհի իրենց արիւնտա «հանգէտը», սակայն հակառակը ըլլալով թուրքերը կ'ընէին և կը ծածկուէին իրենք, վախկոտներ Լին արդեօք... բաց վախկտար կը համարձակի... ս. սմք Հայ ազնկան կուսութիւնը կը պղծէին վտառչաութեամբ և որոյ էր և կ'ընէին. և և միայն ազգեալ չէր այն, լուսուորուած, Եւրոպա համալսարան տեսած զարգացածներն կ'զան հալածողը



պատուհասը անմեղ ազգին և խիստ շատ անգամ գերազանցելով ներսնն ու շատ բռնակալներ իրենց վայրագութեամբ, որ գազանը իրենցմէ բարձր մակարդակի վրայ կը դնէ:

Վկայ ձեզի թուրք զինուորական հիւանդանոցին մէջ շիճուկներով թուշնաւորուած Հայ զինուորները թուրք բժիշկներու կողմէ, վկայ թալեաթներու Էնվէրներու, Ճէմալներու, Սախա Հաւրիմներու, Տօթթ. Քէշիաններու, Երազին ու սարսուալի շահատակութիւնները վկայ՝ Ղարզի հրամաններ տալէ չզհանալով՝ ոստիկանի, յէթէի հազուստ հագնելով Հայեր սպաննելու, կողոպտելու գայլու կուսակալներուն ստտիկան տնօրէններու և բոլոր հրատակութեան երևոյցներու խօլազին գործունէութիւնները... Դեռ կ'ուզէք. լաւ, ա՛ն՝ Տէր Զօրի հրէշը՝ Զէրի, — կոտորեցէ՛ք, կատարեցէ՛ք, բճացուցէ՛ք, կը գոռար նա — և ապրիլ ու զող Հայ մըն է՝ ատաներկու հողիէն մէկը իր ընտանիքին, ոսկելից քօակը կը ներկայացնէ անտի ու կ'աղերսէ — Տէր իմ, ապրիմ իրրեւ ծառայ ստրուկ քեզի, խնայէ, գիտ խնո՛ւք. —

Մտրդը անշուն գթութեամբ կը պատասխանէ — կը խնայեմ քեզ Հայ, առանց ցախ սպաննելով քեզ — սեւ ատրճանակը կը պայթի, մարդը անշունչ կը տապալի, հէգ նա արժանացած էր դերադոն գթութեան... Լսեցէք և այս մարդը զպրոց տեսած էր...

Գարոց. այդ թուրքին համար գայրոյթին ոճիրին, կրքին, վայրագութեան նրբացումն ու զարգացումն է. գարոց, և այդ ա՛յս ազգին համար, երբէք, նա՛ թուրքը ստորին բաղդատութիւնն եղած է իր սկիզբէն ի վեր՝ գողութեան անաշխատ կեանքի ցոփութեանց, մակտրոյծի գոյութեան և գէշ հասկցում ճիւղերանին... :

Ազգ մը, որուն լեզուն իսկ գոյութիւն կողոպտու է, լեզու մը որ միայն սուրն ու արխնը խօսեցաւ և դահճութիւնը փառաբանեց, անէճք ալ ազգին, այդ լեզուին :

Դանէլ — 11, 31, 38

Վերեց կեղծ կանոններուն հակառակ գործողները դիւսէ պիտի հանէ, բայց երկնց կրօնքին պատկանող ազգը



ուժ գտնելով բան պիտի տեսնէ . և առ  
 ազգին խելացիները սոգզը պիտի կրթեն  
 ու ատեն մը սուրի յիտիկ , գերութեան  
 ու յախճաակութեան պիտի հանգիպի ու  
 կրբոր այս աղէտներուն հանդիպին քիչ մը  
 օգնութիւն պիտի գտնեն և շատերը  
 շոգոքորթութիւններով անոնց պիտի  
 իտրին : Բայ խելացիներէն ամենք մտն-  
 ասան պիտի դատապարտուին մինչև որ  
 վերջնախանութիւն անկող , անաստ եր-  
 լեյու համար աս բաներուն պիտի հան-  
 գիպին : Եւ այն թագաւորութիւնը ու-  
 զամը պիտի ընէ ու գինքը բոլոր ազգե-  
 րէ վեր պիտի բարձրացնէ ու պիտի  
 մեծցնէ ու քրիստոնէութեան դէմ ստ-  
 կալի բաներ պիտի խօսի և յաջողու-  
 թիւն պիտի գտնէ մինչև որ բարկու-  
 թիւնը կատարուի , քանզի նախասան-  
 մանուածք ի պարձ պիտի դրուի . և  
 անիկա իր նախաձայրերուն կրօնքն ան-  
 դամ բանի տեղ պիտի չի սեպէ . և կու-  
 նանց արժանապատուութիւնը չպիտի  
 յարդէ և ո է ազգ մը բանի մը տեղ  
 չի պիտի սեպէ :

Այս մարգարէութիւնն ալ կասկած  
 չի կայ թէ հայեւթուրք ազգին խօս-

ուած չըլլայ . թուրքը իրմէ դատ ո և է  
 ազգ մը բանի մը տեղ չէ սեպում և ա-  
 նոր արժանապատուութիւնն ու մարդ-  
 կային իրաւունքը չէ ճանչցած , և իրենց  
 կիներուն անգամ ազատութիւն չէ յար-  
 դած և արժանապատուութիւնը կապ-  
 տած է . զանոնք ձգած է արգելափակ  
 հարէմներու մէջ որպէս զրկուածներ  
 օր ու արևէ և սարուկ-գերի իրենց  
 անտէր , ցանկապաշտ կամքին , և ահա՛  
 այդ պատճառ եղած է որ իրենինը  
 չխնայողը ուրիշին բնու չինայէ) . բայց  
 Հայը կրնա՞ր հանդուրժել անոր անար-  
 գանքին ու նախատինքին , երբէք , նա  
 նարկադրուեցաւ ահար կամ ուժգին  
 բողոքներու ձեռնարկել — Պապը Ալիի  
 ցոյցեր , Եըլտըղի պօմպաներ , Չէյթուհի  
 և Սասունի կերտալից ապստամբու-  
 թիւններ , Խանասորի արշաւանքներ ,  
 Գուճ Գաբուի ցոյցեր , Կարլինի խռո-  
 վանքներ , Վանայ արկիճումներ — որոնց  
 հետեւանքն եղաւ Յարգ յօգուածը ու  
 Մայլսեան ծրագիրը , Բայց ինչ ծրա-  
 գիր . նա ծրագիրն եղաւ , մասնակիցն  
 ընդհ . անցնող ջարդերու և կողոպտում  
 աւարտութիւն անցնող զրկանքներու  
 . . . անորէն և աւելի հուժկու թափով սուր

17609-59





հուր, ջարդ, յափշտակութիւն, կուսու-  
լըկում, ընդունում, տարածուեցաւ սար-  
ստիք ամենուրեք և վերջապէս այնպի-  
սի ընթացք մը առաւ — Ընդհ. Ռազմի  
միջոցին որ անաւոր խղճերն իսկ սար-  
սըռացին. բանա, կախաղան, զնտան,  
չղթայ և տարագրութիւն երկիրը գող-  
գողացուցին, հառաջանքն ու անէծքը  
Աստուծոյ գահոյքին հասցուցին. բար-  
կութիւնը կատարուած էր երբ Համա-  
ձայնութիւնը գեղեցիկ Հայ կամաւոր  
քունդերով եկան իար գլորել յամառ  
դահիճը իր դահէն և իր արիւնագորգ  
փառքէն. այն, ինկաւ ան, և պիտի  
իյնա՛ր կրելու համար իր պատիժը Յաղ-  
թական Արդարութեան ձեռքով:

Գանիէյի 7, 12, 2, 28

«Ատեանը բազմեցաւ ու գիրքերը  
բացուեցան՝ այն ատենը կը նայի այն  
եղջիւրին խօսած ք՛ած խօսքերուն հա-  
մար, այն դազանը՝ Աստուծոյ դէժ՛ խօս-  
քեր պիտի խօսի և Քրիտանեայ ազ-  
գէրը պիտի նեղէ ու պիտի մտածէ ժա-  
մանակներ ու օրէնքներ փոխելու ու  
անոնք մինչեւ ժամանակ մը ու ժամա-

նակներ ու կէս ժամանակ անոր ձեռքը  
պիտի տրուին: Եւ նայեցայ մինչեւ որ  
ան դազանը սպաննուեցաւ և անոր  
ժարմինը կորսուեցաւ և կրակի բոցե-  
րուն տրուեցաւ, և միւս գազաններուն  
իշխանութիւնը միայն վերցուեցաւ,  
բայց մինչեւ ժամանակ մը և տտեն մը  
կենաց երկարութիւն տրուեցաւ անոնց:  
Բայց ատեանը պիտի բազմի և այդ գա-  
զանին իշխանութիւնը պիտի վերցը-  
նեն, զանիկայ մինչեւ վերջ բնաջինջ  
պիտի ընեն ու պիտի կորսնցընեն: Եւ  
Թագաւորութիւնը ու իշխանութիւնը և  
բոլոր երկնիս տակը եզազ Թագաւորու-  
թեանց մեծութիւնը սուրբ ազգերուն  
պիտի տրուին: Դատ ու դատապար-  
տութիւնը ու բոլոր երկնից տակը գըտ-  
նուող Թագաւորութիւններու զօրու-  
թիւնը Աստուծոյ սիրելի և արգար եզոզ  
ազգին պիտի տրուի: Եւ անոր իշխանու-  
թիւնը յաւիտենական պիտի ըլլայ.  
չպիտի անցնի, և բոլոր իշխանութիւն-  
ները անոր պիտի ծառայեն ու պիտի  
հնազանդին:»

Ընդհանուր պատերազմին մէջ Գեր-  
ման ու Թուրք գազաններ միանալով



երբեւ մէկ կամք ու մի ժամին աշխատեցան օրէնքներ փոխելու և անհաստատ կանոններ հնարելու սրպէսզի իրենց հպատակ ազգերը ու օտարահրպատակները թակարդին. անոնք իրենց բռնած գերիները ժամանակ մը, ժամանակներ ու կէս ժամանակ չարչարեցին, կոտորեցին մինչև վերջապէս և կաւ Համաձայնական բանակը և սանձահարեց զանոնք. և Հաշտութեան Ընդհ. Վեհաժողով ստեանը բազմեցան յազթականներ՝ և վերցուցին թուրք գազանի իշխանութիւնը, որուն անկումը ստալինը և վերջինը պիտի բլար. բայց Գերման գողանն ու Աւստրիան իշխանութիւնը միայն պիտի վերցնէին ժամանակ մը ու ատեն մը շարձելով անոնց կենաց երկարութիւն մը, որ աշխատին շինեն իրենց քանդած քաղաքներն ու վանքերը ու փաստաց հատուցում ընեն. բայց անոնք արդէն իրենց ապրուածը հազարու չի պիտի կարողանան, պիտի սրբին ու թափառական դառնան, այնու հանդերձ այդ երկիրներու այլ ժողովուրդներն ու ցեղերը պիտի բաժնուին անիէ և Համաձայնականներու չը

նորիւ՝ Պաղատութեան արդար ընկերակցութեան անիւ հախառ սրութեան տակ պիտի ապրին երջանիկ ու անդորր: Ս', այո՛, այսօր կը կազմուի Շ.դ նորագոյն ստեանը, որ չէ կազմուած մինչև այսօր և պիտի ըլլայ նա միակը՝ և յախտենականը, և մարդկօրէն իտականը: Գա, ազգերու Դաշնակցութեան Ընկերակցութիւնն է, երջանկութեան և արդարութեան օրրան, ուր պիտի սրբաբնի, Սրբագործութիւն, վճռութիւն արժանիին վարձատրութիւնն ու անարժանին կտրուկ պատիժը... և այդ պատիժէն թող ստական անոնք որ պիտի նկրտին բնութանալ և անհազանելի անոր դէմ՝ հեռանալով պարկեշտութեան սանձաններէն և անոր սկզբունքի սուխքներէն... այո՛, վաչ անոր սր կը սխալի, որովհետև խրտիր և այլ և այլ չի կայ անոր բուտարանին մէջ՝ չպիտի ներէ ոչ իր անդամին և ոչ մէկ ու բիշին ան պիտի ըլլայ ազատութեան սիրտը, արդարութեան օրէնքը և ճշմարտութեան գանկը կտարեւալը:

Չգուշտիւն բոլոր ազգեր և գահեր, բազդին պատգամը պիտի ըլլայ աչի վեր:



Դանիէլ—11.3.5—

«Չորսուոր թագաւոր մը պիտի ելնէ ու մեծ իշխանութիւնով պիտի տիրէ և իր կամայք պիտի ընէ և վերջը անոր իշխանութիւնը պիտի կտրուի և երկրիս չորս հովերուն պիտի ցրուի, բաժնուի, բայց իր յաշտութեանն չէ և ոչ ալ իր վարած իշխանութեանը պէս, վասն զի տնօր իշխանութիւնը պիտի կտրուի ու անոնցմէ ուրիշներուն պիտի տրուին»:

Թուրք կառավարութիւնը հաստատուելէն մինչև հիմայ իր ուզած չարիքը ու վայրագութիւնը գործադրեց մինչև որ ալ ընելիք կեցեքում չի մնաց. իր կտորքը եզոյ մարդասպանութիւն, յաշտութեան իշխանն ու կանոնը ու ազնորկանց պատուին բռնարարում... մինչև որ արդարութեան սուրը եկաւ ու առապաից գոյն. արդէն իրենք ալ կը խոտտովանին այդ չորսուոր և վայելուչ կերպով թէ ինչ...»:

«Մենք արդէն պիտի կործանէինք, բայց մինչև հիմայ մեր ըրած չարագործութեան փոխարէն՝ մեզմէ հազար տարի ալ վրէժ լուծելու ըլլաք՝ մեզի չէք

կրնար (հաւատարիլ), ժանտանդ մեր այս վերջին չորս տարիներու ընթացքին մեր հարստահարանքին ու շատ մը ըրածներուն, եթէ Եւրոպան մեզմէ խէ մեր տիրած հողերը մենք այս կապտումէն վերջ ձեզմէ կրճանիկ կ'ապրինք, որովհետեւ Եւրոպան մեզմէ հողը անուելէ վերջ ուրիշ բան չզգանանք եւս, մենք ալ ձեզի հետ հաւատար կեանք կը վարենք, և եթէ յաջողինք պտտիկ կատավարութիւն մըն ալ կը կազենք»:

Եզկեղիսէր, խեղճէր...»

Այսքանէ վերջ դեռ լրբօրէն, անբեատէն կուզեն ապրիլ իբրև պետութիւն... բայց տա, այս կէտին մէջ է որ կը սխալին. իրենց իշխանութիւնը պիտի կտրուէր, և կտարուեցաւ, ժողովուրդներուն պիտի տրուէր և արտեցաւ Մարտիա, Սուրիա, Հայաստան, Ֆուստատան, Հրէաստան... ժանտանդ Հայաստան անկախ և Միացեալ:

Դանիէլ—13.7.13

«Եւ հրեշտակը խօսելով ժամանակ և ժամանակներ ու կէս ժամանակ պիտի ըլլայ և երբոր որ Ազգին ուժը լալ-



րովին ցրուէ . անոնց ամէնը պիտի կա-  
տարուի , ինչու որ այս մտքաբէտ-  
թիւնները հետու ժամանակներու համար  
են . գնա , մ'վիտնիէլ . քանզի այր խօս-  
քերը մինչև վերջին ժամանակը գոց-  
ուած ու կորուսած են : Ետտերը պիտի  
մտքբռնին ու պիտի ճերմկեանն ու պիտի  
փորձուին , բայց ամբարիշտները ամ-  
բարիշտութիւն պիտի ընին ու բնաւ  
ձեկ ամբարիշտ մը չի պիտի հասկնայ՝  
հապա իմաստունները պիտի հասկնան  
ու ձշտնջենաւոր գոհին վերցուելուն և  
աւրոզ պղծութեանը դրուելուն ժամա-  
նակէն 1290 հազար երկու հարիւր իննը  
սուն օր պիտի ըլլայ , երանի՜ անոր որ  
պիտի սպասէ 1335 հազար երեք հարիւր  
երեսուն և հինգ օրերուն պիտի հասնին :

Գոտնիէլ հետու ժամանակներու մէջ  
պատահելիքները — Աղէտները — ցոյց  
տալով Քրիստոնէականերուն և մանաւանդ  
Հայերուն մրայ կը խօտի , նա կ'ըսէ թէ  
— Հայ ցեղը բոլորովին ցրուած ատեն  
այս ամէնը լմնցած պիտի ըլլայ և ժա-  
մանակն ալ կ'որոշէ սասպէս , ժամանակ  
մը (եզակի ըլլալով մէկ տարի կը նշա-  
նակէ) ժամանակներու (յոզմակի ըլլալով  
երկու տարի կը նշանակէ) և կէս ժա-

մանակ [կէս տարի] ընդամենը կ'ընէ  
երեքուկէս տարի , այսինքն Հայ եր-  
կունքը պիտի տեսէր երեքուկէս տարի ,  
ինչ որ եղաւ , աւելի բաց խօսելով  
1290 օր որ յետոյ լաւեղիսը գինադա-  
գարէն 1335 օր պիտի տեսէր որ իրա-  
պէս այսօր կատարուած իրօզութիւն  
մ'մէ . որ հիմալ պիտի փաստենք : 1915  
թուականին Ապրիլ ամսոյ կէսին մօտ  
[ինչպէս Համաձայնականներու կողմէ  
Հայոց մասին թուրքերուն արուած  
վերջնադրին մէջ ալ նայն է] այսինքն  
Ապրիլ 19էն սկսեալ և կեղեկներէն մըշ-  
տնջենաւոր պատարագը երբ վերցուե-  
ցաւ , հոն մուտ գտաւ պղծութիւնը ,  
տաճարներ , վանքեր , զպրօցներ , քան-  
դելիով ու երեցին ու սուրբերուն նուի-  
րական գերեզմաններու վրայ արտաք-  
նոցներ և ախտներ հաստատեցին , և  
ամբողջ Հայկազնեան Ազգը իր հայրենի  
քնադատանքովն — Հայաստանէն մինչև  
Կիլիկիա , Կիլիկիայէն մինչև Վասպու-  
րական և Վասպուրականէն մինչև Փոքր  
Ասիա տարագրեցին ու շարժեցին , կոն  
զոպտեցին ու շարժարեցին : Հայուն ան-  
ու անէծքը երկինքներ բարձրացան ու



անոր ուժը աւանգ, չարաչար ցրուեցաւ, մինչև որ զինագաղարի հաշտարար ձայնը պստաց սղադարձ որով ցեղը ընտնջումէ ճողպրիցաւ, ազատեցաւ 1918 Հոկտեմբեր 31ին, հետևաբար հաշուենք 1915 Ապրիլ 19էն մինչև 1918 Հոկտ, 31 կընէ նախատեսուած 1220 օրերը, ասոր վրայ զրէք զինագաղարի 30 օր պայմանաժամը, զոր թուրքը ուղեց՝ կ'ունենանք 1220 օր, յետոյ զրէք նորէն վերջէն պորայցրուովի համար խնդրուած 15 օրուան պայմանաժամը՝ այն ատեն ճիշդ հաշիւը կը հասնի արամադրուած 1335 օրերը, ուրմն 1918 Դեկտ. 15 մեր օրն է. մեր օր ազատութեան, որովհետեւ նոյն օրն էր որ Անկախ և Միացեալ Հայաստանը հռչակուեցաւ Բարիքի Հայ Պատուիրակութեան կողմէ: Ասկէ վերջ պէտք է Դեկտ. 15ը ամենէ նուիրական օրը նկատենք և տօնենք հանդիսու որապէս, 15, ո՛հ, Տասներկնգր մեր Ազգային Տօնը, գերութեան չղթասին փշրուած և Դիցանոյշ Ողջոյնը Հայ Անկախ Նոր Կենտրին՝ Որ եկաւ պատժել չարագործը որ չի գիտակցեցաւ իր վիճակին:

Յայտնութ. 12, 1.—6. 19—17

Երկնից մէջ մեծ նշան մը երեւցաւ, կին մը արեւը վրան ատած ու լուսինը սաքերուն տակը, և իր գլխուն վրայ 12 սատղի պսակ մը և յղի էր ու երկանց մէջ ծնանելու համար շատ նեղութիւն քաշելով կը պտուար: Եւ երկնից մէջ ուրիշ նշան մը երեւցաւ ու ահա մեծ շարագործ վիշապ մը, որ հօթը գլուխ ու տասը եղջիւր ունէր և իր գլուխներուն վրայ եօթը թագ ու անոր պօչը երկնից աստղերուն երրորդ մասը կը քաշէր և զանոնք երկրի վրայ ձգեց, և վիշապը կեցեր էր այդ կնկանը առջեւ, որ ծնանելու վրայ էր. ու երբ ծնանի անոր զաւակը կլլէ. և կնկան արու զաւակ մը ծնաւ որ երկաթէ գաւազանով պիտի հովուեր անօրէնները ու անոր զաւակը յափշտակուեցաւ Աստուծոյ օգնութեամբ և կնիկը անապատ փախաւ, ուր որ անոր տեղ պատրաստուած էր Աստուծոյ որ հոն կերակրուի 1260 օր: Երբ վիշապը տեսաւ որ ինքը երկրի վրայ ձգուեցաւ, արու զաւակ ծնանող կընկանը ետեւէն ինկաւ և ան կնկանը մեծ



արծուի երկու թևեր արուեցաւ, որ  
 սնապատ իր տեղը թռչի. որ որ պլախ  
 կերակրուի ր ժամանակ մը ու ձանձուկ-  
 ներ և կէս ժամանակ՝ օձին երեսէն. և  
 օձը իր բերնէն դետի պէս ջուր վազ  
 ցուց կնկանը ետեւէն, որ անկառ հեղձ-  
 նեզով ընկզմէ, և երկիրը իր բերանը  
 բացաւ ու կլկեց ան դետը. որ վիշապը  
 իր ետեւէն վազցուց և վիշապը բարկա-  
 ցաւ կնկան դէմ և զնաց պատերազմե-  
 լու անոր սերունդէ—մնացորդու ահնե-  
 րուն հետարանք Աստուծոյ պատուիրանք-  
 ները կը պահէին ու Յիսուսի վկայու-  
 թիւնն օւնէին ։

Ակնարկուած կիւնը Մայր Հայաստանն  
 է, որուն գլխուն վրայ Արեւի շոյթը ծա-  
 զած էր, և բռնապետութեան մահիկ  
 դրօշակը սոքին տակ առած էր, և ա-  
 նոր գլխուն վրայ եզոզ տաներկու աստ-  
 ղի պսակը Միացեալ, Մեծ Հայաստանը  
 կօզմոզ տներկու հաճանգներն են։ Այդ  
 ազատութեամբ յղիայած Հայաստանիկ  
 ծնունդի երկունքներուն մէջն էր, ծը-  
 նանելու համար նա կ'անցնէր ծով տա-  
 ռապանքներէ, ծով արցունքներէ, սյն  
 աղաղակէր Եւրոպային, կը բողբէր

Աստուծոյ գէմ, կ'աղերսէր մարդկու թևա-  
 խղձին, կը հասաչէր անսպաներուն,  
 ապառաժներուն... բայց օգնութիւնը  
 ուշացու. և եզաւ ատեն մը որ ա՛լ  
 յուխտենապէս ազատու երա համար գե-  
 րեզմանին կէտին իջաւ ան... ահա այն  
 ատեն միայն Եւրոպայի խիղճը արթըն-  
 ցաւ, ցնցեկց և վարպետ բժիշկներ հառ-  
 ցուց տառապած կնկան քով և անոնք  
 երբ եկան տեսան որ կիւնը ծնած էր արու  
 զաւակ մը մանկարարձի մը ձեռքով, որ  
 աւանդ մայրն ու զաւակը թողած զա-  
 ցած էր. բժիշկներ մայրն ու զաւակը  
 ափ շտակելով Կովկաս փախցուցին, ուր  
 որ տեղ պատարաստուած էր զանոնք  
 զար մանկու և բժեկու, և ահա շարու-  
 գոյն վիշապը—Գերմանիա— թագաւո-  
 րութիւններու երրորդ մտար — Աւստ-  
 րիան, Թուրքիան, Պուրկարը — միասին  
 առած զանոնք պատերազմին գաշտին  
 վրայ նետած էր. և ատոնք կանգնած  
 վիշապ Գերմանին կողքին կեցած էլ  
 այն կնկան տոջն, որ ծնանելու երկունք  
 ներուն մէջ կը տուայտէր, որպէսզի  
 նորածինը կլկեն, բայց կիւնը ծնաւ ու-  
 տական մանկարարձին ձեռքով ու պ



հսկուէր տգէտ Ժողովուրդները երկութի  
 դաւազանով . բայց Ռուս բռնակը շրտա-  
 ուեցաւ, մինակ թողուց կի՛նն ու նորա-  
 ծինը և ետ քաշուեցաւ . վիշապը խկոյն  
 յարձակեցաւ կնկան վրայ . . . բայց կինը  
 արձուի թեւեր տանելով փախաւ վիշա-  
 պին սաջեէն ու վիշապը գետի մը պէս  
 գինուօր վազցուց կնկան ետեւէն , որ  
 վերջացնէ զայն . սակայն համաձայնա-  
 կանները հասան ցանուցիր ըրին վիշա-  
 պին զօրքերը Էսգրուսի և ուրիշ վայ-  
 րերու մէջ . վիշապը հասկցաւ որ ինքը  
 պիտի տապալի . կործանի , բարկացաւ  
 կնկան դէմ ու գնաց ընաջնջելու անոր  
 սերունդին մնացորդները , թրքահայ բե-  
 կորները բայց նորէն չյաջողեցաւ , որով-  
 հետեւ չուշացաւ Ֆրանտական բանակի  
 Հայ կամաւորներու յաղթանակը — շահ-  
 ուած Պաղեստին ճակտին վրայ — գալ  
 ու սպատել ցեղին մնացորդը , անոր հե-  
 տեւ նորածինն ու Մայրը :

Հայկական տաներկու նահանգնե-  
 րու տիրացու մը սպանովուած էր այն  
 տանն : Միացեալ Հայաստանն է այն ,  
 որու պիտի օժանդակէն արդար և կո-  
 րովի ուղղ մը անոր հաստատութեան

օրէն սկսելով՝ 1260 օր վայելելով ան-  
 կաշառ հովանաւորութիւն մը : Այդ օր-  
 քը վոտահնացած այ հայուն ընդունա-  
 կութեանն ու կարողութեանը 1922 թը-  
 ուին պիտի հեռանայ ինքնավար Հա-  
 յաստանէն :

Յայտնութիւն 13, 1

Ձեռ տեսայ որ գազան մը կ'ելլէր և  
 աւնէր եօթը գլուխ ու տասը եղջիւր ,  
 և անոր գլուխներուն վրայ հայհոյու-  
 թեան անուճներ կային և իր ստքերը  
 արջու պէս , և վիշապ անոր տուաւ իր  
 գօրութիւնը և մեծ իշխանութիւնը և  
 անոր գլուխներուն մէկը մտնու չափ  
 վիրաւորուածի պէս էր , և անոր մահ-  
 ուած վերքը տաղջուցաւ և բարբ կը-  
 կիրը գազանին ետեւէն զարմացու , և  
 երկրպագութիւն ըրին . այն գօրաւոր  
 վիշապին որ գազանին իշխանութիւն  
 տուաւ նաև երկրպագութիւն ըրին գա-  
 զանին նման և օժ կ'ընայ անոր հե-  
 տաւերազմ լինել , և անոր մեծ բաներ և  
 հայհոյութեան բերան արուեղաւ և 42  
 ումիտ անոր իշխանութիւնը արուեղաւ



իր կամքը ընելու և իր բերանը հայհոյութեամբ քրիստոնեականներու Աստուծոյն դէմ բացաւ և անոր անուանք ու անոր խորանք և երկինքը բնակողները հայհոյելու : Եւ անոր իշխանութիւն տրուեցաւ քրիստոնեականներուն հետ պատերազմելու և անոնց յաղթելու և անոր իշխանութիւն տրուեցաւ բոլոր ցեղերու և լիզուներու : Վրայ վայրագութիւններ գործելու (ով որ ականջ ունի թող լսէ) Ով որ վերութեան քէ՛ ինքը գերի պիտի տարուի, ով որ սրով սպաննէ, պէտք է սրով սպանուի : Հոս է քրիստոնեականներուն հաւատքը :»

Թուրք պիտութիւնը — այրինքն Մին, երբեակ Ձինակցութենէն — ներքին և արտաքին անգաղար պատերազմներէ վերջ ի թալիայէն ու Պալքաններէն արդէն հիւանդացած՝ մարդուն մարմինն վրայ մահու չափ խորունկ վէրք մը բացուած էր, բայց դերժանք անոր վէրքը դարմանեց ու առողջացուց, ու անոր հետ միամտալով Համաձայնութեան դէմ պատերազմ հրատարակեց անոնք իրենց մեղրակցութեամբ և փոխադարձ օժանդակութեամբ, սոչխարհիս ստեղ-

ծումէն ի վեր չտեսնուած արարքներ գործեցին, իրենց հպատակ ժողովուրդները սարսափի մատնեցին ու Հէ՛ ամիրաներ չարչարեցին : Անոնք խաչը, խորանք, Քրիստոսը պղծեցին, անոնց հայհոյեցին, իրենք զիրենք Աստուած պարտադրեցին և հպարտացած Վերք երկրի Աստուածն ենք՝ գողացին : Բայց աշխարհ զարմացաւ մանաւանդ թուրքին յանդգնութեանց վրայ, որ Պալքաններէն վերջ շատ վիրաւոր կը կարծուէր յնա ըրաւ իր կամքին բոլոր պիղծ չահատակութիւնները, մինչև որ Համաձայնական դիւցազնութիւնը յաղթահարեց զայն ու Վերք և երկիր ազատեցաւ :

Ով որ ականջ ունի թող լսէ Վրով սպաննողը սրով, գերողը պիտի գգրուի տարագրողը պիտի տարագրուի : Քրիստոնեային հաւատքն հոս է, որ կը վարձատրուի, որովհետև մենք համբերեցինք հաւատքով անխուսափելի դատաստանին : Այժմ թող պատժուին անոնք : Որոնք եղան հեղինակը և պատասխանատուն Մի՛ ծղրուելին : Կուսակալներ, սասիկանութիւն, երեսե-



ղիներ, սօֆիստներ, մտմուշ, ծերակոյտ նախարարներ, դահլիճ և խորհրդաբան բոլորը, բոլորը...»

«Փազան մը տեսայ որ երկրէն կելուէր ու գառնուկի նման երկու եղջիւր ունէր ու կը խոտէր վիշապի պէս. ետառջի գազանին բոլոր վայրագութիւն. նիրը կը վարէր, անոր տուջեր երկիրը և անոր ընակիչները կատիպէր ուր երկրպագութիւն ընեն առջի գազանին, որուն մահուան վերքը առողջացաւ և եմեծ հրաշքներ կրնէր և մինչև անգամ հրճնքէն կրակի բոցեր կիջեցնէր անսկի ժողովրդաց վրայ, առջեր և երկրի բընակիչները կը մայրեցնէր ան հրաշքները որ ձեռքը տրուած էր գազանին առջեր ընելու և եւ երկրի բնակիչներուն կրտէր որ պատկերը շինեն այն գազանին, որ արով վիրաւորուած էր: առողջացաւ: Ով որ գազանին երկրպագութիւն չընէ զանիկա սպաննել կուտար, և կատիպէր՝ ամենք սոյանքն պատկիսեցին ու մեծերը, հարաստները և աղքատները, ծառաները ու ազատները, որ իրենց աջ ձեռքին վրայ նշանը լնդունին և որ մէկը չկրնայ դ'ե

կամ ծախել, բայց միայն այն որ ունի իր ճակտին վրայ դրօշ մը կամ գազանին անունը, կամ անուան թիւը, քանզի մարդու թիւ մէ...»

(Գիտութիւնը ասոր մէջն է. խելք ունեցողը՝ գազանին թիւը թող հաշուէ վասն զի անոր թիւը 666 է):

— Գերմաններն ու Աւստրիացիները Ընդհ. Պատերազմէ առաջ իրր եւրոպական քաղաքակիրթ ազգեր ճանչցուած էին. գառնուկի երեւոյթ առնէին, բայց պատերազմին՝ վիշապի պէս խօսեցան: Ատոնք առջի թուրք գազանին հետ միանալով անոր բոլոր վայրագութիւնները վարեցին ու օժանդակեցին և գազանին մահացու վէրքը առողջացնելով անուանալի յանցանք մը գրծեցին մարդկութեան և քաղաքակրթութեան դէմ և թուրքիոյ բնակիչները ստիպեցին որ երկրպագութիւն ընեն գազանին և թուրք չեղող ազգերը նեղելով չարչարեցին և մնացորդներուն ալ աջ ձեռքերուն վրայ նշան կապել տուին [որպէս պաշտօննայ երկաթուղեաց, արհեստաւոր եւ այլն] որպէսզի չի կարնան ծախել կամ գնել և թուրքերու յատուկ



ալ դրօշ մը հասրեցին գլխարկներն վը-  
րայ կը պատցնէին որպէս զի կարենան  
գնել ու ծախել — Գոյքօթն էր այդ. —  
կ'ստիպէին նաև որ պատկերները ըն-  
դունին այն գաղաններուն որոնք ոճիք-  
ներու մէջ կը թաթիւէին իրենց ձեռ-  
քերը, բողոքողն ու իրենց բռնութեանց  
հակառակողները կսպաննէին, մանա-  
ւանդ անանդ Հայերը, իրենց կողմա-  
կից և իթթիեռտականները որոնք զերծ  
մնացին այն աստապանքներէ զերծ կը  
մնային, անոնք, այս, որոնք ունէին  
գազանին անունը կամ անունն թիւր.  
Այսինքն բացատրենք, հարուստ թուրք  
կայսերական գահը մինչև հիմայ ունե-  
ցած է 36 նրկասունը վեց թաղաօրք  
որպէս գայան, ուրեմն գրեցէր մէկէ-  
մինչև 36 թուանշանը և գումարեցէր  
ասպէս: Օրինակ.

1	7	13	19	25	31	214
2	8	14	20	26	32	165
3	9	15	21	27	33	129
4	10	16	22	28	34	93
5	11	17	23	29	35	57
6	12	18	24	30	36	21
—	—	—	—	—	—	—
21	57	93	129	165	201	666

Յայտնութ. 17, 1, 7, 13, 18, —

«Ու եօթը սեպտանները բունդ  
եօթը երեշտակներէն մէկը եկաւ և ինքի  
նախաստեղա բանով, կեցար ու քնի  
ցուցնեմ ան մեծ պոռնիկին գտաստա-  
նը որ շատ ցարերուն վրայ կը նստի,  
որու նախ իրկի ընակելները անոր  
պոռնիկութեանը գինով գինովցած և  
չիս տարաւ ու անտայ կին մը որ կար-  
էր գազանի մը վրայ նստել էր և զար-  
ջարուած էր սկիւղ ու պատուհան  
բարեբով և մարգարիտներով և իր  
ձեռքը սկիւղ գաւաթ մը ունէր պղծա-  
թիւններով լեցուն և անոր հակաին վը-  
րայ անունն որ գրուած էր «Գոյքօթ»,  
Մեծ Քարեղն պոռնիկներու ու երկրի  
պղծութիւններուն մայրքը և անպա-  
յան կինը որ քրիստոնեաներուն արի-  
նովը ու Յի.ու.սի վկաներուն արեւոյ  
գինովցած էր: Եւ հիշատակը ինքի ո-  
րու, իս քնի ըսեմ ան կնիանը խոյր-  
հարցը ան եօթը գլխարկները այն եօթ  
իւանդն են որ ան կինը անոր վրայ էր



նստի ու հօթը թագաւորութիւններն են, ու թերրորդը զեռ եկած չէ երրորդայ քիչ ատեն պիտի մնայ և այն գազանը որ այ կար ու չիկայ, անիկայ ու ու թերրորդն է ու հօթէն ըլլալով զէպի կորուստ կերթայ և ըսելով ինձի՛ սն ջուրերը որ տեսար, որոնց վրայ պոստիկը կը նստէր, ազգեր ժողովուրդներ լեզուներ են և տար եղջիւրներ, որ գազանին վրայ տեսար, անոնք պիտի տանն պոստիկը ու զանիկա ամայի ու մերկ պիտի ընեն և անօր մարմինը պիտի տանն ու զանիկա կրակով պիտի այրեն ինչո՞ւ որ Մոսուս՝ ատենց արտին մէջ դրուս որ իր կամքը կատարեն ու մէկ կամք ըլլան և կրնայ թագաւորութիւնը գազանին տան մինչև որ Աստուծոյ խօսքերը կատարուին, և կինը որ տեսար այն մեծ քաղաքն է որ կը թագաւորէ երկրի թագաւորներուն վրայս:

Այդ պոստիկը ըսուած կինը գազանացեղ թուրք ազգն է, որ շատ իր ազգերու ու լեզուներու վրայ կիշխէ չիկայ երկիր մը որ այնչափ այլապան տարրեր պարունակէ. այս գազանը շատ թա-

գաւորութիւններ ու յիշատակեցեալներ տապալելով զանոնք իր վարդապետութեան մարտն տակ տաւ և երկրի բնակիչները անօր վարենու թեան ու հարստահարութեան ենթակայ եղան, քան զից, աւերեց երկիրներ, քաղաքներ, ամայիս հոգի որ զարդարու երբ մարգարիտներով և պատուական քարերով աղամանդներով, զժուլիտներով, և յակինթներով: Անոր ոսկիէ երկիրը (գաւաթը) լեզու եքսե անկ պղծութիւններով, բայց ճաշին գրուած էր սեռու լաւք: Մեծ հարկերն աչսինչն՝ այդ երկիրը հարկունի անկուսը պիտի տանուար, որպէս պոստիկներուն ու պղծութիւններուն մայրը, հարկուն, որ ամբողջ քրիստոնէական յանդաներու վարդապետներու, բարոյիչներու արխեանովը գիտովցան, ու ինչ հօթը գրչի խները Պոլիսը կազմող հօթը զարներն են, հօթը թագաւորները Ներսէսներ, Ատտիլաներ, Ալարիկներ, Գեներալներ, Բարձրաներ, Չինկիզխաններ ու Համիաներ. հիշալին հօթը գազաններ, և ասիերորդը որ կուր ու չկար ան այ Գերմանն է ու հօթիկը գրչին հն



մեծ գ. գոնու թիւններ ընկելով դէպի  
Պորուստ գրորուեցաւ և թիչ ասոն միայն  
չարունակեց իր հրէշու թիւնները :

Եւ ասոր եղջիւրներ, որ գազանին  
վաչ էին անոնք զինակից ու թուրքից,  
խխանները, որոնք հայրենիքը սխալ-  
մամբ ասեցին ու գանդկա ամայի և  
հերկ ձգեցին ու անոր ժողովուրդները  
կերան ու քաղաքները կրակով արեցին  
որովհետև բռնակալները իրենց կամքը  
միայն կատարեցին և իրենց իշխանու-  
թիւնը թուրքից համար պատուհա-  
սրին : իրենց խելքը կորսնցուցին և ա-  
նոր անարդար իշխանութիւնը կործա-  
նեցաւ : Ընծ քաղաքն էր Պոլիսը, որ  
կը թագաւորէր թագաւորներու վրայ :  
Պոլիսը որ յետոյ կուուախանար չըլլալու  
համար Միջագետքին քաղաք մը եղաւ :  
Աստուծոյ խօսքը կատարուած էր :



Յայտն. 16, 10, 16. —

«Եւ հինգերորդ հրեշտակը իր սկա-  
ւառակը գազանին աթառին վրայ թա-  
փեց և անոր թագաւորութիւնը խա-  
ւորեցաւ և ցաւէն լեզուներնին կը ծա-  
մէին և երկնից Աստուածը հայհոյեցին  
իրենց ցաւերուն ու իրենց պաշարնե-  
րուն պատճառով և իրենց գործքերէն  
չի ապաշխարհեցին : Եւ վեցերորդ հրեշ-  
տակը իր սկաւառակը մեծ գետին՝  
ալիսնքն Եփրատին վրայ թափեց ու  
անոր ջուրերը ցամքեցան : որ արեւելքի  
կողմէն թագաւորներու ճամբան պատ-  
րաստու ին :

Մեծ գետի ախարկու թիւնը Հայաս-  
տանի Եփրատին է, որուն ժողովուրդը  
ցամքեցուց թուրքը հոն թափելով դիակ-  
ներ ողջին ու սպաննուածին թէ պատ-  
ճառ եղաւ որ Համաձայնականները այդ  
արեւելքի ճակտին յարձակին, որպէս-  
զի դադրեցնեն ցեղին վրայ գործադր-  
ւող խժոժալից վայրագութիւնները,  
որոնք ամբողջ աշխարհը դղրդացուցին  
և տեղերքի խիղճը սարսուացուցին : սհ :



աներեւակայելի ջարդեր, զանոնք չի տեսնելու համար երկնային հոգիներ հատ քաջուեցան, սկանչնին խփեցին, աչքերնին գոցեցին, անոնք, սգիները գացին մտան գթոտ սրտերում կտրված բանականքում և զանոնք զրկեցին Հայուն պատուհասը՝ պատուհասելու և անոնք հասան թնդանօթներով ու խորտընկէցներով, գնդացիրներով և չուրնէլներով, հրեասնիններով ու օգանաւերով կրակ ու բոց տեղացուցին կեղեքիչներուն գէմբայց անոնք չի գղջացին, չապաշխարհեցին իրենց շարիքներուն վրայ և իրենց վէրքերէն աւելի զայրացած սկսան աւելի ուժգին հարստանարել ժողովուրդը. այդ թրքական, շրէշները, կիներու արգանգէն մանկիկները հանելով սուրններու ծայրը անցուցին. անոնք երախտները բզբանելով մտավաճառի խոտու թէն կտխեցին, երիտասարդները ժողովելով կապեցին ու օղջ ողջ թաղելով «կեցցէ՛ թագաւորս գոչեցին. անոնք ճիւղաները աղջիկները պղծելէ վերջ, քանձաներով պատարէն կտխեցին, մեռեալ կիներուն ձիծերը կտրելով խրախճանի և ցոփութեան

թափորներ պտտցուցին, բանտարկեալներուն իրենց կղկզմանքը կերցնելով արսոր քշեցին, և ճամբան վրդերնին քար կապելով կամուրջէն գէտ նետեցին. անոնք, անՍատուածները, Ազնուականները միատեղելով ոտքերնին պայտեր գամեցին ու ոտքի վրայ քալեցուցին, մտաւորականներն ու հարազատ ազգասէրները բռնելով կախազան բարձրացուցին. անոնք, քարսիրտները, հրեանդները ժողովելով ու թելափակելով «վընաստար է» ըսին ու չոր խոտ ու քարիւղ թափելով այրեցին անխնայ. եւ ահա յանկարծ հրեշտակներ երկնային լոյսը մարեցին, սև ամպեր քաշելով երկրի վրայուժ, ու սաստիկ փոթորիկներով ծանրակաթիլ անձրեւներ ու խոշոր կարկուտներ տեղացուցին, հարստահարիչ և հարստահարուողներուն վրայ. ու մարախներ խրկեցին որ սովեր առաջ եկան. Բայց Աստուծոյ այն գարշելի պատուհասները իրենց դուրձքերէն չի ապաշխարեցին ու մեղոյ չըսին.

Եւ դարձեալ սկսան բիւրաւոր հայերը հին բերդեր լեցնելով անօթի ու ծարաւ՝ խոշտանգեցին անոնք, վամ-



բաները, խեղացիները քարայրներու  
 մէջ լեցնելով անխղճօրէն ջրախեղդ  
 ըրին, բիւր բիւրաւոր Հայեր օտէիննե-  
 րով հալածեցին անապատներ ու հոն  
 իրարու վրայ նստեցուցին, ու շուրջը  
 պաշարելով սուրս հինոզը սպաննեցին,  
 ու օրերով պղծութեան մէջ ձգեցին ու  
 տնոնց վրայ գիջադան... , գիգիչ անա-  
 պատներուն մէջ թափառական ու մերկ  
 թողուցին, ցարաին ու անձրեւին անօ-  
 թի, ծարաւ, տնոր հանգրուան ու դա-  
 դար չի ցուցուցին. անոնք՝ սղջերուն  
 հետ գիտակներն իսկ պղծեցին, իսկ մնա-  
 ցորդներուն վրայ հրօտակներ զրկեցին,  
 հո՛ւր, սո՛ւր, ջա՛րդ, ետթաղան տե-  
 զացուցին ու գինովութեան խօլանքնե-  
 րով ու քրքիչներով սկալուրին մաշ-  
 ուան վրայ քանքանացին... և հարուն  
 ոչ մէկ տէր, ոչ մէկ ճար գտնուեցաւ,  
 ոչ գութ մնաց՝ որ տնգութ չըլլար՝  
 ոչ տիրոս որ քարտիրա չըլլար... և  
 նա Հայը՝ Աստուծմէ ալ յուստնատ,  
 տիեզերքէն հետո՛ւ երբօրայէն՝ յուսա-  
 կտուր, վքուած մնաց, անոր տղադակ-  
 ները անլսելի մնացին, այն ատեն Աստ-  
 ուած գերօգոյն նէպոյցի մը մէջ զայ-

բացած զահէն ելաւ ու հրամայեց եր-  
 եսակին դէմ՝ երեսակ բանակին՝ արշա-  
 ւել ու բնաջնջել անուղղայ վայրագները  
 և պատժել զանոնք արժանաւորապէս և  
 ահա Համաձայնականները եկան անգի-  
 մադրելի փոթորիկի մը սէն՝ գարկին  
 անօրէնները և աւերակներուն վրայ հը-  
 րաշքի կտթողներ տնկեցին յողթու-  
 թիւնը հաշակեցին և Սպասուխիւնը ա-  
 ւետեցին շեփոքներով, և ժողովուրդներ  
 յարգանքով ծանցան սցատարարին առ-  
 շև, որ չարագործներուն իշխանութիւնն  
 ու թագաւորութիւնը խաւարեցուց-  
 թեկած էր Մեծ Բարեւն :

Աւետիս, ո՛վ աշխարհ, ահա կործա-  
 նեցաւ այդ Մեծ Բարեւոնը, կործիր  
 հրէշայիններու, բորենիներու, թունա-  
 տար վիշագներու, մարդասպաններու,  
 երջալիզ-քէօշքերու զահը, թուրքիան,  
 կործանեցաւ աւետիս, պոռնիկներու  
 մայրը, որու պոռնիկութեան գինին-  
 րով գինովցաւ շատ մը սղջեր, ժող-  
 վուրդներ, սրբազան վայրեր : Ո՞վ տը-  
 դարութիւն ինչ մեծ հրաշքներ կրնաս  
 գործել դուն՝ որպէսզի տղատագրեցիր՝  
 մահուան դատապարտուած փոքր այդ-



գերը դարաւոր բնապետութեան ճի-  
րաններէն՝ ազատութեան ծարաւի  
երախտազէտ մարդկութիւնը, գուն,  
ով Արդարութեան Յաղթութիւն՝ գե-  
ղեցիորէն առիւր այնքան անմեղ և այն-  
քան անթիւ Զոհերու Վրէժը անոնց հա-  
մար՝ որոնք գերեզմանի խորերէն այս  
վեհ օրուան հսկեցին... Ով լեզուներ,  
ով ազգեր ուրախացէք, լինկաւ Բարե-  
լոն... Աւետիս... :



ՄԱՏԿՈՍ 13, 14, 32.

«Երբոր տեսնէք աւերժուելիս պրդ-  
ծութիւնը, որ Դանիէլ Մարգարէին ձեռ-  
քովը բուսած է, թէ արժան չեղող տե-  
ղը կը կենայ (ո՞վ որ կը կարգայ թող  
հասկնայ) այն ատենը թող փախչին, և  
այն սր ատենիքին վրայ է թող տուն չի  
թիւնէ ու չի մտնէ իր տունէն ջան մը  
տանկոտ և ան որ արայն մէջն է թող  
եւ չի դաւնայ իր հանգերձը առնելու :  
Բայց վայ այն օրերը յղի եզոյներուն  
և ձիժ տուսցներուն՝ ազօթք ըրէք որ  
չեր փախաւար ձեռը թող չըլլայ :  
Քանզի այն օրերը ատանկ նեղութիւն  
պիտի ըլլայ որ անոր նմանը Աստուծոյ  
օտեղծած արարածոց սկիզբէն մինչև  
հիստ եղած չէ և պիտի չըլլայ : Վասնզի  
ազգ ազգի վրայ պիտի ելլէ թագաւո-  
րութիւն թագաւորութեան վրայ և  
խառնութիւններ ու մահաարժամներ և  
անդ անդ սովեր ու երկրաշարժներ պի-  
տի ըլլան : Ասանք ցաւերուն սկիզբներն  
են զգուշացէք ձեր անձերուն քանզի ձեզ  
անտեսաններու պիտի մատնեն և ժողո-



վարաններու մէջ պիտի ձեծեն և իմ  
անուանս համար կուտակուներու և թա-  
գաւորներու առջև պիտի կենար. ա-  
նոնց վիայութիւն ըլլալու համար և ա-  
ռաջ աւետարանը պէտք է քարոզուի  
բոլոր ազգերուն: Ու եղբայր իր եղբայրը  
պիտի մասնէ և հայրը իր որդին և որ-  
դիք իրենց ճնոգքին վրայ պիտի ելլէ  
ու պիտի մեռցնէ ցանոնք: Եւ իմ ան-  
ուանս համար ամէնուն ատելի պիտի  
ըլլաք. բայց ով որ մինչեւ վերջը համ-  
բերէ անեկս պիտի ազօրի: Բայց այն  
օրերը այն նեղութենէ ետքը արեգակը  
պիտի խաւարի ու յուսինը իր լոյսը  
չպիտի տայ, և աստղերը երկինքէն  
պիտի թափին, ու երկնից մէջի զօրու-  
թիւնները պիտի շարժին: Եւ անտուն  
պիտի տեսնեն Որդին Մարդոց ամպե-  
րուն մէջ եկած մեծ զօրութիւնով ու  
փառքով: Եւ այն ատեն իր հրեշտակ-  
ները պիտի զրկէ ընտրեալները պիտի  
ժողովէ չորս հազարէն և երկրի ծայրէն  
մինչև երկնից ծայրը: Թգենիէն առակ  
մը: Երբ անոր աստերը ու ասերենները կը  
ցցուին գիտցէք թէ ամուսը մօտ է:

նայնպէս ալ դուք երբոր այս բաները  
եղած տեսնէք պիտցէք թէ մօտ է դու-  
ներուն քովը: Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի  
որ այս ամէն բաները պիտի ըլլան:  
Երկինք և երկիր պիտի անցնին բայց  
իմ խօսքերս բնաւ պիտի չանցին: Բայց  
այն օրուան ու ժամուն համար մէկը չի  
գիտեր, ոչ երկնից մէջ եղող հրեշտակ-  
ները ոչ Որդին հապա միայն Հայրը:»  
Քրիստոսի Մարգարէութիւնը Դա-  
նիէլի և Յովհաննէսի Մարգարէութիւն-  
ներու բովանդակութիւնը կը պարու-  
նակէ: Քրիստոս կը խօսի նախ և առաջ  
առաքեալներուն տանջանքներուն ու  
հարչարանքներուն վրայ: Եւ վերջը ա-  
ւերիչ պիղծ ազգին Երուսաղէմի յար-  
ձակմանը, վերջը կ'ակնարկէ Ընդհ-  
Պատերազմին, ուր ազգ ազգի, թագա-  
ւոր թագաւորի վրայ ելաւ, այն ատեն  
խաւովութիւններ, մահտարածամներ և  
տեղ տեղ սովեր յառաջացան. ասոնք  
բոլորը այնպիսի աղէտներ էին որ մին-  
չև հիմա նմանը չէր տեսնուած և ասկէց  
վերջն ալ բնաւ չպիտի տեսնուէր: Նա  
կափսոսայ յղիներուն ծժատու մայ-  
րերուն, սրոնք ամբարիչաներէն պիտի



տարագրութիւն հետու, մասլ անապատ-  
ներ, ոմանք ճնշման տակ իրենց կեան-  
քը ազատելու համար պիտի հարկա-  
դրուէին իրենց ցեղին զաւակները մատ-  
նելու ինչպէս մատնեց շալոն իր սրգին  
եղբայրն եղբօրը և շատեր կրօնքնին  
փոխելով՝ զաւագրեցին իրենց արիւ-  
նակիցները, այո՛, այս մարգարէու-  
թիւնը պիտի ըլլային և եղան: Գրիտ  
տափ տասներկու ընտրեալներէն մէկը  
մատնիչ եղաւ ու Գրիտոսը մատնեց,  
բայց առանց անոր ալ Հրեայք զայն  
խաչի մահուան դատապարտած էին:  
բայց Յիսուսի վիշտը եղաւ իր աշակեր-  
տին ձեռքով մատնուիլը, և այն տակն  
նա ըսաւ որ Յուզա Արքայութենէ պի-  
տի զրկուէր և դժողքի պիտի բերժա-  
նանար: Պարագոն միեւնոյն է Հայուն  
համար: Հայը՝ մահուան գտտապարա-  
ւած էր թուրքերու կողմէ, աչք անա-  
ռարկելի է ու եթէ մատնիչներ չուե-  
նար՝ նորէն այդ վճիռն էր: բայց անոր  
սիրար կսկծացնողը իր արիւնուհիցնե-  
րուն ձեռքով զաւածանօրէն մատնուիլն  
է, և քունի որ Յիսուս մը միեւնոյն  
կէտին մէջ սրբազօրծած է հատուցումը

հարցը՝ մենք ալ պէտք է որ պատճենք  
զանոնք ըսելով «Ձեզի ապրիլ չիկայ,  
պիտի մեռնիք...» այո՛, մենք պէտք է  
տեսնանք անոնց պատիժը:

Գրիտոս մէկ մ'ալ աշխարհի կոր-  
ծանու մին վրայ կը խօսի և կըսէ. «ա-  
րեւը պիտի խաւարի, լուսինը իր լոյսը  
չի պիտի տայ և աստղերն ալ իրենց  
լոյսերը կորսնցնելով անյայտ պիտի ըլ-  
լան» Հաւանական է որ լուսին ու աստ-  
ղերը խաւարին արեւի պողելուն հե-  
տեանօք և աշխարհ կ'անցնի: բայց  
Յիսուս կ'աւելցնէ «եթէ այս աղէտները  
տեսնէք՝ զիտցէք թէ աշխարհին կոր-  
ծանումը մօտ է...» Ուրիմն աշխարհի-  
կործանումը մօտեցած պիտի կար-  
ծենք: ս'հ, ոչ, այդ կարծիքը մեր ու-  
ժէն վեր ըլլալուն աստղագէտին և գի-  
տունին կը պատկանի: Այս կէտին մենք  
ստպէս կը մտածենք՝ Երկրագունտին  
վրայ բուննող ու ճնող տմէն բաներ կը-  
սէ Սբ. Գիրքը, վեց օրուան մէջ ստեղծ-  
ուած են և Եօթերորդ օրը հանգիստի  
յոտկացուած Աստուծմէ, վեց օր շա-  
բուանակ երկնելով Ստեղծումը աշխար-  
հին, որով օր մը՝ Եօթներորդը սբ. օր



հրամայեց . հիմայ քանի որ մարգարէ-  
ները՝ Աստուծոյ քով մէկ օրուան հա-  
զար տարի արժելը ընդունած են և ռա-  
տանան հազար տարի կապուելով նոր  
աշխարհ և նոր մարդ պիտի ըլլայ՝ շա-  
րագործութիւնը պիտի վերնայ և քա-  
նի որ աշխարհի ստեղծու մի աշխատանքը  
վեց օր տեւեց՝ ուրեմն օր մը հազար  
տարի համընդով աշխարհի բոլոր տղէտ-  
ներն ու պատերազմները, տառապանք,  
ներն ու նեղութիւնները 6 առաւել հա-  
զար, վեցհազար տարի պիտի տեւեն և  
միայն այս տարիներէն վերջ հազար  
տարիները հանգստութեան տարիներ  
պիտի ըլլան և սուրբ դար պիտի կոչ-  
ուին, իսկ գալով նորէն Աւետարանին՝  
կը ցուցնէ որ աշխարհի ստեղծուելէն  
մինչև Քրիստոսը գալուստը 4000 տարի  
եղած է, ուրեմն գեա 81 տարի կուզէ  
որ նախագրուած 6000ը լեցնէ, արդեօք  
այս 81 տարուան մէջ՝ միմուրտը պայ-  
ծառացած պիտի ըլլայ՝ եթէ ոչ աշ-  
խարհի հորիզոնին վրայ դեռ սեւամպեր  
պիտի տեսնուին. այդ կախում ունի  
Երպայչէն, և Եւրոպան աշխարհը յա-  
ւիտեան խնայած պիտի ըլլայ նոր սե-

ամպերէ եթէ լիովն գոհացնէ բոլոր  
անիրաւեալ ազատատենջ բայց գերի  
ազգերը տայ ու յարգէ անոնց Անկա-  
խութիւնն ու չափաւորութիւնը, որոնց  
մէջ մանաւանդ Մարտիրոս Հայաստանը .  
որ կը գտնուի աշխարհի կէսին վրայ  
իշխող, երկու ընտանիքներու միջև,  
հակասակ պարագային ըրչ ազանու-  
թիւն մեծամեծ վնասներու և անկուծ-  
ներու դուռ կը բանայ :





# ԹՐԲԱՎԱՆՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ ԳԱՅԸՆ ՈՒ ՀՈՎԻՒՆԵՐԸ

Առեւտր չարագործութիւններով ծա-  
նօթ գայլին մէկը բաւական ճիւղանալով  
կը մտածէ հովիւներուն հետ բարեկամ  
րլլալ և այդ ձեռով զիբուրթեամբ ձեռք  
անցնել սխարները և այս մտածու-  
մով կիջնէ լեռնէն ի վար՝ կը վազէ  
կերթայ հովիւի մը (Ամերիկեան հո-  
վիւին) և սապէս կոխիւ

— Բարի լոյս Ձեզի ս'վ հովիւ բա-  
րեկամ, դուք շատ բարի հովիւի մը կը  
նմանիք, ձեր դէմքն ալ այդ կը ցուցնէ  
թէ դուք արիւնհերու վրաս հասցնել  
չէք ուզեր և միշտ հարգասիրութեամբ կը  
վարուիք, ուստի գիտէք որ ձեզի եկայ  
և խնդրանք մուծիմ. բնդուենցէք կ'ա-  
զաչեմ, լաւ գիտցէք որ այս լեռներու  
վրայ ինձմէ կատ նշանաւոր գայլ մը  
չիկայ արեմն եկէք զիս ձեր հօտերուն  
վրայ պահապան առէք և տեսէք թէ  
անկէջ վերջ ձեզի խանդարող չպիտի

րլլայ, միայն աս պայմանով որ ինձի  
տարեկան վեց օտո սխար սաք...  
և այն տանն ձեր հօտերը սպաս, ան  
վախ կարածուն այս լեռնէրու վրայ և  
դուք ալ հանդարտ և վստահ կրնաք  
րլլալ, հաւատացէք ինձի

Հովիւը պազանին նեճգութիւնը հաս-  
կընելով սապէս կը պատասխանէ.

— Քեզի բան մը ըսե՛մ. ձերուկ պա-  
պս, ես այն լեռներէ հեռու կը գրա-  
նուիմ, ես ատանկ վտամ տախտակի  
վրայ կոխելէ կզգուշանամ, եթէ վաղը  
եղլէս հօտերուս վրայ յարձակելու բը-  
լասն'ով պիտի ազատէ անմեղ հօտերս  
քու անիծեալ ձեռքէդ, աէ՛ֆ եղիք սը-  
տեղէն պիղծ բերան:

Փայլը բարկացած հայտնութեան ո-  
րտաուժով մը լապս և գնաց երկրորդ  
հովիւի մը (Անպղիտցի) քով և զգու-  
շութեամբ ու խորամանկօրէն սապէս  
խօսք առաւ.

— Ի՛՛վ բարեբար հովիւ, որչափ գը-  
թասիրտ ես քեզ տեսնալուս պէս, կը  
լիչեմ մեր պապերուն օրերը, ինչ օ-  
րեր էին, որչափ սերտօր բեկամութիւն  
ձեր պապերը, միշտ մար պաշտպանը ե-



զած էին: Հիմայ որչափ կը զզջանք, որ մեր և ձեր մէջէն սեւ կատու մը տնցուցին. ներեցէք մեզի՝ սխալեցանք մոռցանք ձեր Վսեմութիւնը, բայց եկած եմ, իմ մեղքերս խոտտովանելու՝ եթէ ներէք զարձեւել բարեկամներ լինելով ձեր հովանիին տակ ապրինք, միայն թէ տարեկան չորս հատ ոչխար տուէք ինձի:

Հովիւը «ոչխար» անունը յետեւէ պէս պահ մը շուարան սապէս կը պատասխանէ.

— Ի՛նչ... ոչխար մի... դեռ ոճրած գործութիւն, կատգամ գայլ լաւ գիտցիր որ, մեր պապերը ձեր պապերուն հետ, եթէ հաշտ և իբր բարեկամ ապրեցան՝ այդ տնոր համար էր որ, ոչխարները քու ճիրաններէն ազատէին, ու մեր բուրգն ու իւղը հայթայթելով և հովիւներուն սահմանները բռնաբարուծ մէ ապահովուէին, բայց դուք հակառակ մեր հաշտ ընթացքին, մտրդ չի դարձաք, և դառնայիք ալ չունիք, շարունակ ձեր ոճիրներուն սրտակտուր ձայները, մեր սրտերը արձագանգեցին և մեր խղճերը սաստուցուցին ասկէ վերջ ձեր

պաշտօնը՝ պզտիկ՝ բայց քաջ ու շրջահայեաց հովիւի մը (հայերուն) յանձնած ենք, շատ խօսիլ պէտք չէ, գոցէ արիւննարբու բերանդ ու հեռացիր ըսելով վանտեց դայլը:

Խեղճը շուարած գլխիկոր շարունակեց ճամբան և ուրիշ հովիւի մը [Քրանսացի] հանդիպելով կանգ առաւ, մինչև դետին ծռելով բարեւեց զայն ու սապէս սկսաւ:

— Զիս կը ճանչնաս, հովիւ տկար...

Հովիւը.— Եթէ ձեզի կը ճանչնամ, ձեզի պէս շատերը կը ճանչնամ:

Գայլը.— Ինձի՞ պէս... չեմ կարծեր, ես ձեր այդ գիտցած վայրագութիւնները շատոնց ձգած եմ, և եկած եմ, ձեզի հետ բարեկամ ըլլալու. եթէ զիս ձեր հօտերուն համար օգնական առնելու ըլլաք, շատ երախտապարտ պիտի մնամ, սա պոյնանով սակայն որ, տարեկան երկու հատ ոչխար տաք և այն ատեն ձեր հօտերը այս կողմերում ազատ անվախ կարածուին և անոնց ծուռ նայող անգամ չըլլար, անոնց հախէն ես կուգամ, իբրև հաւատարիմ պահապան:



Հովիւը ժայտաց ու խնդալ սկսաւ :

— Ինչո՞ւ կը խնդաս հարցուց գայլը .

— Ինչո՞ւ չխնդամ, կերիւ այ թէ քա-  
ւական ձերայերես, մօրս քո կը զողայ :

— Այո՛, քայց գիտ ձեր ոչխարները  
խնդգերու շափ ու ժ ունիմ . . .

— Մի բարկանար, ձերուկ պապա,  
մի՛ բարկանար : Մենք շատ անգամներ  
ձեզ փորձեր ու հասկչեր ենք, սր դուք  
գազան ծնած, ու միշտ գազան պիտի  
ուպո՛րք . անգամ մըն՞ ալ խաբուելու շոփ  
մանկոմիտ շենք, ձեզի հետ բարեկա-  
մանախոնկամ ամօթ կը համարինք մենք  
քաշու թի՛ր առջեւէս արի՛նտս պազան :

Գայլը ան ու վան քաշելով — Ի՜նչ  
ընեմ ես հիմա, շատ ուղեցի, քիչ աղա-  
չեցի, շատ աղաչեցի, քիչ սոգեցի,  
չեղաւ, խնքղինքս կատաղի ցոյց առի,  
ան ալ չեղաւ, աշխուրհիս մէջ շրճաւ  
բարեկամ չունիմ եզեր, անօթի պիտի  
մեանիմ, գոնէ երթամ սա գրացի թըշ-  
նամիրս (Ռուս) կտրելի է խնդրանքս  
կրնգուենի, սրով հետեւ «խապատարի»  
մարդը խնդալարի կըլլայ, ըստ ու  
գնաց անոր քոս եւ ըստ .

— Դուն մեր չին գրացին ես . ձեր

տրխութենէ հմայուելով համարձակեցայ  
ձեզի գալ : Ես այնպիսի գայլ մը գար-  
ձեր եմ որ, եթէ իմանաք խնդալէն կը  
ճաթիք :

Հովիւը. — Ինչպէ՞ս, րո՞ւ տեսնամ,  
մեր լեռան գայլ, պատմէ՛ տեսնամ :

— Ես անանկ զարմանալի գայ մը  
գարձեր եմ որ, բնաւ ողջ ոչխար չեմ  
կրնար ուտել . ալ մեռածները կուտեմ,  
ուստի զիս ձեր հօտերուն քով պահա-  
պան գրէք, մի միայն մեռածները ու-  
տելու պայմանով :

Հովիւը բարկացոտ պատատխանեց .

— Դուն ողջ ըլլայ թէ մեռած եթէ  
ոչխար ուտելու սովորութիւնդ չի ձգես  
ես քեզի հետ բարեկամ չեմ ըլլար ես  
անոր հակառակ եմ, անոր համար է որ  
միշտ կուուելով ձեզի հետ անհաշտ թըշ-  
նամի գարձանք . վաղը պիտի ելլես ող-  
ջերուն հիւանդ աչքով ե հիւսնողներուն  
ալ մեռած աչքով նայելով պիտի ուտես  
ես քեզի հետ բարեկամ չեմ ըլլար,  
տէ՛Ֆ եղիր առջեւէս, տէ՛Ֆ եղիր առիթը  
չկորած, ըտելով վռնտեց գայլը :

Գայլը խորունկ մը հառաջեց եւ ի՜նչ  
ընեմ, վերջին ճիգ մըն ալ թափեմ ըտե-



լով հինգերորդ հովիւի մը (Իտալիա) բով գնաց ու այսպէս սկսաւ : ձեռքով երեսը սեղմած :

— Ո՛վ հովիւ, կը տեսնես որ ալ բաւական ծերացեր եմ, շատ չեմ ապրիր, եկուր զիս մինչև մահ կերակրէ, վերջը մորթն քեզի թող ըլլայ :

Հովիւը ըսաւ, եկուր տեսնեմ, մորթդ ալ հաստ է եղեր, շուներու ձեռքը շատ տնցած չես բայց եթէ ազնիւ էք հիմակուրնէ տուէք՝ ըսաւ ու ցուպը ձեռքը առաւ՝ յարձակեցաւ դայիին վրայ, քովի պզտիկ հովիւները գայլին փախչիլը տեսնելով՝ անոնք ալ յարձակեցան անոր վրան : ու գլուխն ու ականջները վերաւորեցին (Մակեդոնիան) ու փրփրուցին, ու ծանր վէրք մալ տուին, դայլը ստեկացած ու կատղած սկսաւ սոսնալ, վայ անգութ շարատահարիչներ, քանի որ իմ խօսքիս չհաւտացիր ու ինձ այս վիճակի մատնեցիր : Ես այ չի մեռած ձեռքէս եկածը պիտի լնեմ շտերով վազեց գնաց :

Եւ հեռուները քնաց գտաւ գորաւոր վիշապ մը (Գիրմանիա), որ շատոնց բրին յարմար բարեկամ մը կը փնտռէր :

Ե՛լ. միանանք. համաձայնինք վիշապ աղբար, սա ապերախտ հովիւներուն խրճիթներուն վրայ յարձակինք և վատահղիք որ անոնց շուներն ալ մրսակէր բլլալուն համար մեր ցեղէն են պիտի միանան մեզի, և անոնք ներսէն մենք դուրսէն ամէն բան պիտի լմնցունենք, դուք ոչխարներուն և մենք ալ այժերուն վրայ կիշխենք և երջանիկ կեանք կանցնենք :

Ելան ու համաձայնեցան ու հովիւներուն խրճիթներուն վրայ յարձակեցան, ու անոնց կիները վախցնելով, մանուկները վերաւորեցին : Եւ անտէր հօտերուն վրայ ալ յարձակելով կտորեցին ու փշրեցին և շատ մըն ալ վնասներ տուին. վերջապէս իրենց հաւատաբիւմ շուներուն միացող հովիւները վրայ հասնելով անոնց գործը լմնացրին ու դայլը սպաննեցին :

- Լեռները ազատ
- Հօտերն ալ ազատ
- Հովիւները հանդարտ
- Եւ աշխարհք խաղապութիւն :

ՎԵՐՋ



ՎՐԻՊԱԿ

Էջ 15ի մէջ բազդատութիւնն կար-  
դալ, բազազրութիւնն .

Էջ 37ի մէջ Մարգարէն մարմինն վրայ  
կարդալ անոր մարմինն .

Էջ 28ի մէջ Արեւի ըյսք, կարդալ  
լոյսը .

Էջ 41ի մէջ պատճառս ըզ կարդալ  
պատճառս ըջ .

Էջ 47ի մէջ, այն տանն թող փախ-  
չինք կարդալ, այն տանն Հրէաս տանի  
մէջ եղողները թող փախչին :



1799

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is mostly illegible due to fading and bleed-through.





5505  
5506

0001577  
0001584

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0001584

ՀՀ Ազգային գրադարան



NL0001577



